ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____» _____ 2025թ. **N ----- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՐԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՎՃԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ և 33-րդ կետերով, 70-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Վարչական իրավախախտում կատարած այն անձանց փոխարեն, ում նկատմամբ մինչև 2025 թվականի հոկտեմբերի 23-ը ներառյալ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154.1-ին հոդվածի հիմքով կայացվել են վարչական տուգանք նշանակելու մասին վարչական ակտեր և նշված անձինք կամ այն իրավաբանական անձինք, որոնց գործադիր մարմնի ղեկավար է հանդիսանում վարչական իրավախախտում կատարած անձը, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահին արդեն իսկ երկարաձգել են տրամադրված շինարարության թույլտվության ժամկետը կամ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում սահմանված կարգով ստացել են ավարտական ակտը կամ երկարաձգել են շինարարության թույլտվության ժամկետը (բացառությամբ Երևան քաղաքի ավագանու կողմից շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառման արտոնությամբ շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման դեպքերի)՝ սույն կետով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու համար վարչական ակտով նախատեսված չվճարված տուգանքի գումարի կամ դրա չվճարված մասի չափով համայնքի բյուջեից կատարել վճարում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՐԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՎՃԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, ընթացիկ իրավիճակը, առկա խնդիրները և առաջարկվող լուծումները.

Նախագծի մշակումը պայմանավորված է կառուցապատման ոլորտում գործունեություն իրականացնող բազմաթիվ ընկերությունների կողմից գործնականում առաջացած խնդիրների լուծման անհրաժեշտությամբ: Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154.1-ին հոդվածով վարչական պատասխանատվություն է սահմանվում կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում չավարտելու համար: Ընդ որում՝ կառուցապատումը՝ կառուցումը, վերակառուցումը և (կամ) քանդումը, համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում չավարտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ շինարարության նախահաշվային արժեքի (իսկ նախահաշվային փաստաթղթերի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշների համաձայն հաշվարկված ծախսերի) երեք տոկոսի չափով: Իսկ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքը նշանակելուց հետո՝ նոր սահմանված ժամկետում, կառուցապատումը չավարտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ շինարարության նախահաշվային արժեքի (իսկ նախահաշվային փաստաթղթերի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշների համաձայն հաշվարկված ծախսերի) տասնհինգ տոկոսի չափով:

Գործնականում Օրենսգրքին համապատասխան վարչական իրավախախտման համար նշանակված վարչական տուգանքների գումարները իրենց գումարային մեծությամբ խնդիրներ են առաջացնում կառուցապատման ոլորոտում՝ այն է՝ բազմաթիվ կառուցապատողներ կարող են հայտնվել սնանկության եզրին, հազարավոր ընտանիքներ չստանալ իրենց խոստացված բնակարանները, արդյունքում կարող են առաջանալ տնտեսական ծանր հետևանքներ, երկրի ներդրումային միջավայրը կարող է կրել ռիսկեր, ինչը բացասական անդրադարձ կունենա բիզնես միջավայրի և այն անձանց ակնկալիքների վրա, որոնք վստահելով կառուցապատողին՝ վճարել են գումար, հետագայում բնակարանքի ձեռքբերման օրինական ակնկալիքով:

Հաշվի առնելով կառուցապատման շուկայում խորացող խնդիրները, սնանկությունների և ձախողումների առավել ռիսկայնությունը, առաջարկվում է Վարչական իրավախախտում կատարած այն անձանց փոխարեն, ում նկատմամբ մինչև 2025 թվականի հոկտեմբերի 23-ը ներառյալ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154.1-ին հոդվածի հիմքով կայացվել են վարչական տուգանք նշանակելու մասին վարչական ակտեր և նշված անձինք կամ այն իրավաբանական անձինք, որոնց գործադիր մարմնի ղեկավար է հանդիսանում վարչական իրավախախտում կատարած անձը, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահին արդեն իսկ երկարաձգել են իրենց շինարարության թույլտվության ժամկետը կամ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում ստացել են ավարտական ակտը կամ սահմանված կարգով երկարաձգել են շինարարության թույլտվության ժամկետը (բացառությամբ Երևան քաղաքի ավագանու կողմից շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառման արտոնությամբ շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման դեպքերի)՝ սույն կետով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու համար վարչական ակտով նախատեսված չվճարված տուգանքի գումարի կամ դրա չվճարված մասի չափով համայնքի բյուջեից կատարել վճարում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ